536 Անհնազանդ եղար դու Ինձ,

1. Անհնազանդ եղար դու Ինձ,
Ո՞վ Իմ պատկեր դու, մա՛րդ,
Վռնդվեցիր դու պարտեզից,
Անապատ ձգվեցիր:
Անապատում ընկած էիր դու արյանդ մեջ,
Անցա և ասացի՝ ապրի՛ր ինձ համար:

2. Բայց դու անհնազանդ եղար
Եվ մեղքը սիրեցիր,
Գերի եղար սատանային
Եվ մահվան գնացիր:
Քեզ համար Ես Իմ Որդուն ուղարկեցի,
Գերությունը գերի առա Քրիստոսով:

3. Իմ առջև սուրբ կյանքով ապրիր
Եվ դու Ինձ նմանվիր,
Իմ պատվերները միշտ պահիր
Եվ սիրով կատարիր:
Քեզ համար խաչի վրա ես չարչարվեցի,
Քո մեղքի համար խոցվեցի, որ ապրես:

4. Քեզ հավիտենական կյանքն է
Սպասում երկնքում,
Իսկ երկրի վրա հալածանք
Պիտ կրես Ինձ համար:
Դե՛, շտապիր մտնելու Սուրբ Երուսաղեմ,
Ուր սուրբերը կգովերգեն Հիսուսին:
Պատրաստ եղի՛ր փողի հնչելու ժամանակ
Հարսանյաց հանդեսին ներկա գտնվել: